




Աստուած ըսաւ Նոյին, որ տապանէն դուրս գալու ատենն է: Նոյ եւ իր ընտանիքը սկսան տապանը պարպել անասուններէն:


19



Նոյ շատ շնորհակալ էր Երախտապարտ կը զգար:

Ան խորան մը շինեց եւ սկսաւ պաշտել Աստուծոյ, որ ազատեց իրեն եւ իր ընտանիքը սարսափելի ջրհեղեղէն:


20



Աստուած Նոյին հրաշալի բան մը խոստացաւ:

Ան խոստացաւ Նորէն ջրհեղեղ չդրկել, որ մարդկութիւնը դատէ իրենց մեղքերուն համար:


21




Վերոյիշեցնելու համար իր խոստումը Աստուած մեծ նշան մը տուաւ:

Ծիածանը Աստուծոյ նշանն էր իր խոստումին:

22



Նոյը եւ Մեծ Ջրհեղեղ



Ջրհեղեղէն ետք Նոյ եւ իր ընտանիքը Նոր սկիզբ մը սկսան: Ժամանակ մը ետք Նոյի որդիները եւ անոնց որդիները լեցուցին աշխարհը: Բոլոր երկիրները եկած են Նոյէն եւ անոր բոլոր զաւակներէն:

23

Նոյը եւ Մեծ Ջրհեղեղ
 Աստուծոյ խօսքէն պատմութիւն մը,
 Սուրբ Գիրքը:
 Կը գտնուի հետեւեալին մէջ
 Ծննդոց 6-10
 "Ընդ խօսքիդ մուտքը լոյս կը ցոլացնէ:"
 Մաղմուս 119:130

Written by Edward Hughes
 Illustrated by Byron Unger; Lazarus
 Translated by Most Rev. Prof. Varant Zareh Seropian
 Adapted by M. Maillot; Tammy S.
 Story 3 of 60
 M1914.org
 Bible for Children, PO Box 3, Winnipeg MB R3C 2G1 Canada
 License: You have the right to copy or print this story,
 as long as you do not sell it.

Աստուած գիտէ, թէ շատ գէշ բաներ ըրած ենք, որոնք հինգ մեղք կը կոչէ: Մեղքին պատիժը մահն է, սակայն Աստուած այնքան մեղ կը սիրէ, որ Իր Որդին Յիսուսը մեզի դրկեց, որպէսզի խաչին վրայ մեռնի եւ մեր մեղքերուն համար պատժուի: Ետքը Յիսուս համբարձաւ եւ դրախտ՝ իր տունը բարձրացաւ: Եթէ կը հաւատաս Յիսուսին եւ իրմէ կը պահանջես որպէսզի ներէ քեզի ջուր մեղքերուդ համար, Ան կը ներէ: Ան կու գայ եւ մեզ կը բնակի իսկ դուն յաիտեան Իր հետ:

Եթէ կ'ուզես մեղքերդ ազատիլ, հետեւեալը ըսէ Աստուծոյ: Տէր Աստուած ես կը հաւատամ, որ Յիսուս մահացաւ ինծի համար եւ հիմա Ան անգամ մը ես կ'ապրի: կ'աղաչեմ, որ գաս իմ կեանքս մէջ եւ ներես բոլոր մեղքերս, որպէսզի կարենամ Նոր կեանք մը ապրիլ, եւ որ մը հետոյ ըլլամ, յաիտեան: Օգնէ ինծի որպէսզի քեզի համար ապրիմ ջուր որդիիդ պէս: Ամէն:


Կարդայ Սուրբ գիրքը եւ ամէն օր Աստուծոյ հետ խօսիլ:
 Յովհաննու 3:16

Հայերէն Armenian



Նոյը Աստուածապաշտ մարդ մըն էր: Մնացեալ մարդիկը կ'ատէին եւ անհնազանդ էին Աստուծոյ:

1



Օր մը Աստուած սարսափելի բան մը ըսաւ. "Ես պիտի կործանեմ այս չար աշխարհը", ըսաւ Աստուած "Միայն ջուր ընտանիքդ պիտի ազատուի":

2




Աստուած գզուշացուց Նոյին ըսելով, որ մեծ ջրհեղեղ պիտի գայ և ծածկեմք ամբողջ աշխարհը:

3



"Մեծ տախտակե տապան մը շինէ, որ մեջը բաւէ քու ընտանիքդ և անասունները" հրամայեց Նոյին: Աստուած Նոյին տուաւ ճշգրիտ ցուցմունքները. Նոյ գործի անցաւ:

4



Ժողովուրդը Նոյին վրայ կը ծիծառէին երբ Նոյ անոնց կը բացատրէր, թէ ինչու կը շինէ այս նաւը:

Նոյ շարունակեց շինել: Ան նաեւ շարունակեց ժողովուրդին խօսիլ Աստուծոյ մասին: Ո՛րէն մէկը մտիկ չէր ընէր անոր:

5



Նոյ մեծ հաւատք ունէր: Ան Աստուծոյ կը հաւատար թէւ տակաւին անձրեւ չէր տեղացած ատկէ առաջ: Արդէն նաւը պատրաստ էր և պէտք էր մեջը պարանքները լեցնել:

6



Հիմա հասան անասունները: Աստուած կարգ մը անասուններէն ետթական բերաւ և ուրիշներէն երկուքական մեծ և պզտիկ թռչուններ, ...

7




... պզտիկ և երկարահասակ գազաններ բոլորն ալ դէպի տապան կ'ուղղուէին:

8




Թերեւս ժողովուրդը անարգական խօսքեր կ'ուղղէր Նոյին երբ անասունները կ'առաջնորդէր դէպի նաւ:

9




Անոնք երբեք չէին դադարէր Աստուծոյ դէմ մեղք գործել: Անոնք չէին խնդրէր տապանին մեջ մտնել:

10



Վերջապէս ամեն անասունները և թռչունները նաւ էլան:

11



"Տապան ելիր" հրաւիրեց Աստուած Նոյին


"Դուն և քու ընտանիքդ": Նոյ, իր կինը, իր երեք տղաքը իրենց կիներով մտան տապան, յետոյ Աստուած գոցեց տապանին դուռը:

12




Ետքը անձրեւ սկսաւ: Սաստիկ ջրհեղեղ, որ աշխարհը ծածկէց, քառասուն օր և քառասուն գիշեր:

13




Ջրհեղեղին ջուրերը ծածկեցին քաղաքները և գիւղերը: Երբ անձրեւը դադարեցաւ Նոյնիսկ լեռներ ջուրերով ծածկուած էին: ԱՄէն ինչ որ օդ կը շնչէր մեռած էր:

14



Ջուրերը երբ բարձրացան, տապանը կը ծփար անոր երեսը: Կրկար ըլլաւ, որ ներսը մութ էր, թերեւս անհասկիստ, և թերեւս ալ վախնալիք: Սակայն տապանը պաշտպանեց Նոյը ջրհեղեղէն:

15




Հինգ ամիս ջրհեղեղէն ետքը Աստուած չոր հով դրկեց: Կամաց-կամաց տապանը հանգչեցաւ Արարատ լեռան գագաթը:

16



Նոյ ագռաւ մը և աղանիկ մը արծակեց տապանին պատուհանէն: Աղանիկն չգտած ըլլալով չոր ցամաք հանգչելու համար ետ դարձաւ Նոյին:

17



Մէկ շաբաթ ետք Նոյ Նոյն փորձը կրկնեց:

Այս անգամ աղանիկն դարձաւ կտուցովը ձիթապտուղի տերու բռնած: Յաջորդ շաբաթը Նոյ գիտցաւ, որ աշխարհը չոր է, որովհետեւ աղանիկն ետ չդարձաւ:

18